

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ  
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Արաբագիտություն

#### *Գոռ Գևորգյան*

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ  
ՆԿԱՏԱՍԱՐ. ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱԿ ԱԼ-ՍԻՍԻԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019).....7-17

#### *Արամ Գասպարյան*

ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.).....18-30

#### *Տարթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ  
(2016, 2020 թթ.). ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ.....31-49

#### *Արմինե Հակոբյան*

ԱՐՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ  
ԿՈՆՑԵՊՏԸ.....50-65

#### *Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՇԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....66-78

#### *Խաղիջե Ահմադ Մեհրաբի*

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ.....79-86

### Իրանագիտություն

#### *Անուշ Ստամբոլյան*

ԻՄԱՍ ԽՈՍԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱԴԻՀ»  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ,  
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....87-97

#### *Ալեն Հայրասյետյանց*

ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ  
ԲԱՅԱԶԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ»,  
ԹԵ՛ ԽՈՐՀՈՒՐԴ».....98-110

*Նունիկ Դարբինյան*

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ  
ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....111-133

*Տիգրան Չանդոյան*

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-  
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ.....134-144

**Թյուրքագիտություն**

*Կուրադայ Ուրազանևա, Վերունիկյա Ռազունովսկայա, Ալեքսանդր Մաֆայրյան*  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒ-  
ԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-  
ԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....145-166

*Արշակ Գևորգյան*

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՈՎԱՐՄԱՆ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ.  
ԹՈՒՐԹԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....167-186

*Մարգարիտա Կրտիկաշյան*

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՉՑԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ  
ԵՐԱՃՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.....187-200

*Սամվել Ռամազյան \**

ԵՎՐՈՊԱՅՈՒԲ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ  
ԹՅՈՒՐԹԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ.....201-223

*Անի Ոսկանյան*

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....224-238

\*\*\*

*Ռուսլան Յականյան*

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ,  
ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ).....239-247

*Հովհաննես Խորիկյան*

ԿԱՊԱՐՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ  
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ.....248-261

## CONTENT

### Arabic Studies

*Gor Gevorgyan*

EGYPT'S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE  
PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI.....7-17

*Aram Gasparyan*

ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF  
NATIONAL IDENTITY (1962-1999).....18-30

*Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan*

COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN  
ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR  
PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS.....31-49

*Armine Hakobyan*

COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR  
AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA".....50-65

*Mohammed Haj Ibrahim*

THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN  
THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT.....66-78

*Khadije Ahmad Mehrabi*

THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES  
IN THE TEXT OF THE QUR'AN.....79-86

### Iranian Studies

*Anush Stamboltsyan*

THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL  
PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH"  
DOCTRINE.....87-97

*Alen Hayrapetyanc*

THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF  
THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION:  
"BLESSING OR ADVICE?".....98-110

*Noonik Darbinian*  
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY  
TALES AND FOLKLORE..... 111-133

*Tigran Candoyan*  
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH  
NATIONALISM IN THE TERRITORY OF  
THE REPUBLIC OF TURKEY..... 134-144

**TurkicStudies**

*Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V*  
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL  
TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS  
CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE  
TRANSLATIONS INTO ARMENIAN..... 145-166

*Arshak Gevorgyan*  
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID  
NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE:  
THE TURKISH DEEP STATE..... 167-186

*Margarita Krtikashyan*  
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN  
THE TURKISH MUSIC SCENE..... 187-200

*Samvel Ramazyan*  
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK)  
IN ARMENIAN AND TURKIC EPICS..... 201-223

*Ani Voskanyan*  
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN  
THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT,  
ADANA PROVINCE..... 224-238

\*\*\*

*Ruslan Tsakanyan*  
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY  
(EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW,  
ULTRA-LOW DATES)..... 239-247

*Hovhannes Khorikyan*  
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA  
IN ACHAEMENID PERSIA..... 248-261

**Խաղիչն Ահմադ Մեհրաբի<sup>1</sup>**

**ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՈՒՄ**

*Բանալի բառեր՝ փոխարինում, նախդիր, անցողական բայ, չեզոք բայ, Ղուրան, այաթ:*

Ինչպես հայտնի է, արաբերենում անցողական բայի ( الفعل المتعدى ) գործողությունը խնդրին է փոխանցվում կա՛մ անմիջականորեն, և այդ դեպքում օբյեկտը դրվում է խնդրառական ( المنصوب ) դիրքով, օրինակ՝ ( 2:21 ) ( ٱلَّذِي خَلَقَكُمْ ) ( Ո՛վ մարդիկ, երկրպագե՛ք ձեր Տիրոջը, որն արարել է ձեզ), կա՛մ հարակցական մասնիկի՝ նախդիրի միջոցով, և այդ դեպքում խնդրառական դիրքն զբաղեցնում է նախդրավոր կապակցությունը, օրինակ՝ ... قَالَ رَبُّكَ الْمَلَائِكَةَ ... ( 2:21 )՝ ... ձեր Տերն ասաց հրեշտակներին ( բոց.՝ հրեշտակների համար):

Քերականագետները տարակարծիք են երկրորդ տեսակի անցողական բայերի դասակարգման հարցում: Նրանց մի մասը կարծում է, որ դրանք անցողական բայերի շարքում առանձին խումբ են կազմում, մյուսներն էլ դրանք դասում են ոչ թե անցողական, այլ՝ չեզոք բայերի շարքին:

Մասնավորապես Շաուկի Դայֆն ավելի հիմնավորված է համարում առաջին կարծիքը, նշելով, որ նախդիրի միջոցով կառավարող բայը նույնախիսի ազդեցություն ունի նախդիրով բառի վրա, ինչպես որ ուղիղ խնդրի: Ըստ նրա, օրինակ, لفظ زيد – لفظ زيد بالكلام ( բոց.՝ *Չայդը խոսք արտահայտեց – Չայդը խոսքի [միջոցով] արտահայտվեց* ) նախադասությունները նույնական են, քանի որ

<sup>1</sup>ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ փոստ՝ k\_ahmadmehrabi@yahoo.com

երկուսն էլ կառավարում են «խոսք» բաղադրիչը: Որպես լրացուցիչ փաստարկ նա նշում է այն հանգամանքը, որ խնդրին նախդիրի միջոցով և անմիջականորեն փոխանցվող բայերի հարադրության դեպքում երկուսի միջև հնարավոր է շաղկապի գործածումը, ինչպես, օրինակ, *مررت بزيد وعمراً* (բոց.՝ *Ես անցա Ջայդի և Ամրի մոտով*):<sup>2</sup>

Այլ հեղինակներ, որոնց թվում նաև Ահմադ Աբդ աւ-Սատտար ալ-Ջավարին, համարում են, որ նախդիրի միջոցով անցողական բայերն իրականում չեզոք բայերի մի ենթակարգ են, քանի որ իրադարձության և ժամանակի իմաստները դրանցում թույլ են արտահայտված, ինչն իր հերթին անդրադառնում է այդ բայերի լեզվական վարքագծին տարբեր ժամանակաձևերում գործածվելիս, ուստի և անցողական է դառնում միայն նախդիրի միջոցով:<sup>3</sup> Այդ տեսակետը հաստատում է նաև Իբրահիմ Աւ-Սամառանին, որը պնդում է, որ այդ բայերի համար հիմնականը ինքնաբավության պակասն է, որը լրացվում է դեպի խնդիր անցողականությամբ:<sup>4</sup>

Թեև երկու կարծիքների միջև կա որոշակի հակասություն, նրանք միասնական են այն հարցում, որ բայը կարող է անցողական լինել նախդիրի միջոցով: Հիմքում չեզոք լինելով՝ այն այնուհետև նախդիրի միջոցով ձեռք է բերում գործողությունը խնդրին փոխանցելու կարողություն: Շաուկի Դայֆը դրանք դասում է անցողական բայերի խմբին, քանի որ նա բերում է մի օրինակ, որում չեզոք սեռի բայը կարող է անցողականությունն ապահովել ինչպես ինքնուրույն, այնպես էլ նախդիրի միջոցով: Բացի դրանից, նա նախդիրով բայերը չեզոք է անվանում, դրանով էլ հաստատելով, որ դրանց հիմքը չեզոք է: Այդ իսկ պատճառով հնարավոր է սահմանել, որ նախդիրով բայերի դասը ենթակայի գործողությունը խնդրին է

<sup>2</sup> St' u. 11. شوقي ضيف، تيسيرات لغوية، دار المعارف، القاهرة، 1990، ص. 11.

<sup>3</sup> St' u. 1974. أحمد عبد الستار، نحو الفعل، المجمع العلمي العراقي، بغداد، 1974.

<sup>4</sup> St' u. 180. إبراهيم السامرائي، الفعل زمانه وأبنيته، مؤسسة الرسالة ط-3، بيروت، 1983، ص. 180.

փոխանցում նախդիրի միջոցով, քանի որ անկարող է ինքնուրույն տարածել իր իմաստը ենթակային հաջորդող անվանական միավորին:

Նախդիրի միջոցով անցողականությունն ապահովող բայերի խնդիրը մեկ այլ հարթությունն է ունի. այն կապված է այնպիսի տարածված երևույթի հետ, ինչպիսին է տարբեր նախդիրների՝ նույն իմաստով գործածվելու, կամ նույն նախդիրի՝ տարբեր իմաստներ արտահայտելու հանգամանքը:

Տարբեր նախդիրների հետ գործածվելիս միևնույն բայը կարող է արտահայտել տարբեր իմաստներ, երբեմն՝ հակադիր, օրինակ *رَغِبَ فِي* - ցանկանալ, իսկ *رَغِبَ عَنْ* - չցանկանալ, խուսափել: Մյուս կողմից, կան դեպքեր, երբ տարբեր նախդիրներ միևնույն բայի հետ կապակցությամբ նույն իմաստն են արտահայտում, օրինակ *رَغِبَ مِنْ* կամ *رَغِبَ عَنْ* – հեռու լինել (ինչից):

Եթե առաջին դեպքը բանավեճերի առարկա չի դառնում, ապա վերջինի սահմանման հարցում նույնպես արարքերականագետների մոտ միակարծություն չկա:

Այսպես, Բասրայի քերականական դպրոցի ներկայացուցիչների մեծամասնությունը պնդում է, որ նախդիրները մեկը մյուսով փոխարինելը քերականորեն ճիշտ չէ, քանի որ ամեն մի նախդիր կարող է արտահայտել միայն մեկ իմաստ: Եթե այն կոնկրետ բայի հետ օգտագործվում է ոչ թե իր հիմնական, այլ մեկ այլ իմաստով, ապա այդ դեպքում նրա անցողականությունը փոխաբերական պետք է համարել:

Ըստ նրանց, նախդիրների փոխարինումը նախդիրի դիրքում համաբանորեն չի կատարվում, քանի որ նախդիրները միմյանց չեն փոխարինում նմանությամբ: Նախդիրը, համաձայն այս տեսակետի, կարող է ունենալ միայն մեկ իրական նշանակություն՝ «*في*» նախդիրն, օրինակ, ունի մեկ իրական՝ պարագայական իմաստ,

«على» նախդիրի իրական նշանակությունը «բարձր լինելն» է, «من» նախդիրը միայն «մեկնակետ» իմաստն ունի, իսկ «إلى» նախդիրը՝ «ավարտակետ» և այլն: Հետևապես, ըստ բարեցիների, եթե նախդիրն այլ իմաստ է արտահայտում, քան իր իրական իմաստը, ապա այդ իմաստի արտահայտումը պետք է փոխաբերական համարել, ոչ թե իրական: Ահա, օրինակ, «غرد الطائر في الغصن» (բոց.՝ *Թռչունն երգեց ճյուղի մեջ*) ասույթում «في» նախդիրի իրական պարագայական նշանակությունը չի կարող գործածվել իր սկզբնական իմաստով, քանի որ խոսքն այստեղ ոչ թե ճյուղի ներսի, այլ ճյուղի վրայի մասին է, ուստի «في» նախդիրն այստեղ իր սկզբնական նշանակությունից տարբերվող «բարձրադիր» իմաստն է արտահայտում, որը հատուկ է «على» նախդիրին, իսկ «في» նախդիրի դեպքում գործածվում է փոխաբերաբար:

Քուֆայի քերականական դպրոցի ներկայացուցիչները, ինչպես նաև որոշ բարեցի քերականագետներ, կարծում են, որ նախդիրները նույնպիսի բառեր են, ինչպես և մյուս խոսքի մասերը, հետևաբար կարող են արտահայտել մի քանի իմաստ: Նրանք պնդում են, որ եթե նախդիրի որևէ իմաստ այնքան է տարածված, որ դրա հասկանալը ունկնդրի մոտ բարդություն չի առաջացնում, ապա դա տվյալ նախդիրի իրական իմաստն է և չի կարող փոխաբերություն համարվել:<sup>5</sup> Այս դպրոցի ներկայացուցիչների կարծիքով միևնույն նախդիրը կարող է արտահայտել մի քանի տարբեր իմաստներ, որոնք բոլորն էլ կարող են հիմնական լինել տվյալ նախդիրի համար, և, որ մի քանի տարբեր նախդիրներ կարող են արտահայտել միևնույն իմաստը:

Նրանց հիմնական փաստարկը Ղուրանում և արաբական պոեզիայում այս երևույթի տարածվածությունն է, ինչպես Ղուրանի

<sup>5</sup> Նախդիրների փոխադրման շուրջ բանավեճի մասին մանրամասն տե՛ս 538-537: عباس حسن، النحو الوافي، ج-2، ط-4، دار المعارف بمصر، ص: 538-537

2:185 այսպե՛ս, որտեղ ասվում է. ...وَلْتَكْفُرُوا بِاللَّهِ عَلَىٰ مَا هَدَاكُمْ... (...որպեսզի դուք մեծարեք Աստծուն նրա համար, որ նա ձեզ ուղղորդել է...), և (համար) նախդիրի փոխարեն օգագործվում է *على* նախդիրը, որի հիմնական իմաստը «վրա» է, կամ 47:38 այսպե՛ս. ... وَمَنْ يَخُلْ فَإِنَّمَا يَخُلْ... عَنْ نَفْسِهِ... (...և ով ժլատություն անի, ապա ինքն իր հանդեպ (բոց.՝ վրա) է ժլատություն անելու...), որտեղ *على* (վրա) նախդիրին փոխարինել է *عَنْ* (մասին) նախդիրը:

Իբն ալ-Սարաջը գտնում է, որ նախդիրների իմաստային ծավալը կարող է ընդլայնվել. դրանք կարող են փոխարինել իրենց հիմնական իմաստին մոտ իմաստ արտահայտող այլ նախդիրների<sup>6</sup>:

Անշուշտ, պետք է համաձայնել, որ այս տեսակետը առավել հիմնավորված ու համոզիչ է, քանի որ հաշվի է առնում նախդիրների ոչ միայն արտահայտման, այլ նաև բովանդակության կողմերը: Ըստ էության, խոսելով այս կամ այն նախդիրի հիմնական նշանակության մասին, հարկ է հասկանալ, որ այդ նշանակությունն առանձնացվում է ոչ թե որպես այդպիսին, այլ ըստ այն լեզվական համատեքստերի հաճախականության, որոնցում այս կամ այն նախդիրը հայտնվում է հենց այդպիսի նշանակությամբ:

Այսպիսով, հիմնական՝ առավել տարածված իմաստներից բացի, որոշակի համատեքստում նախդիրները կարող են արտահայտել նաև այլ նախդիրներին հատուկ իմաստներ՝ փոխարինելով դրանց: Նման օրինակները բազմաթիվ են, մասնավորապես, Ղուրանի տեքստում:

Ստորև Ղուրանի այսո՛րերի համատեքստային վերլուծության հիման վրա բերվում են նմանատիպ օրինակներ՝ ըստ առանձին նախդիրների.

<sup>6</sup> St'ui. الأصول في النحو، ابن السراج، تحقيق عبد الحسين الفتلي، بيروت، مؤسسة الرسالة، الطبعة 1996م ص.414..الثالثة.

1. ب նախդիր.

- فی նախդիրին բնորոշ ներգոյական հոլովի կամ «մեջ» կապի իմաստը, ինչպես 3:123 այսթում՝ ولقد نصرمكم الله ببدر (Աստված արդեն օգնել է ձեզ Բադրում),

- علی նախդիրին բնորոշ տեղի պարագայի «վրա» իմաստը, ինչպես 83:30 այսթում՝ وإذا مروا بهم يتغامزون (և եթե անցնում էին նրանց կողքով (բոց.՝ վրայով) աչքով նշան էին տալիս միմյանց), քանի որ 37:137 այսթում ասվում է. وَأِنَّكُمْ لَأْتَمُرُونَ عَلَيْهِمْ مُصْبِحِينَ (և իսկապես դուք անցնում եք նրանց կողքով առավոտյան), որտեղ հենց علی նախդիրն է օգտագործված,

- նախդիրին բնորոշ «-ից» իմաստը, ինչպես 76:6 այսթում՝ عينا يشرب بها عباد الله (մի աղբյուր, որից խմում են Աստծո ծառաները):

2. ل նախդիր.

- علی նախդիրին բնորոշ «վրա» իմաստը, ինչպես 83:30 այսթում՝ وإذا مس الإنسان الضر دعانا لجنبه (և եթե մարդուն չարիքն է դիպչում, նա կոչ է անում մեզ, որ լինենք իր կողքին (բոց.՝ կողքի վրա),

- فی նախդիրին բնորոշ ներգոյական հոլովի կամ «մեջ» կապի իմաստը, ինչպես 89:24 այսթում՝ إلا هو (միայն նա կբացահայտի այն իր ժամանակին (բոց.՝ իր ժամանակի մեջ),

- إلى նախդիրին բնորոշ «դեպի» իմաստը, ինչպես 7:43 այսթում՝ الذي الحمد لله الذي هدانا لهذا (Փառք Աստծուն, որը ուղղորդել է մեզ դեպի սա):

3. في նախդիր.

- علی նախդիրին բնորոշ «վրա» իմաստը, ինչպես 20:71 այսթում՝ ولأصلبتكم في جنوع النخل (...և ես կխաչեմ ձեզ արմավենու քների վրա):

4. عن նախդիր.

- علی նախդիրին բնորոշ «վրա» իմաստը, ինչպես 47:38 այսթում՝ ومن يبخل فإنما يبخل عن نفسه (...և ով ժլատություն է անում, խնայում է ինքն իր վրա),

- من نساխդիրին բնորոշ «-ից» իմաստը, ինչպես 42:25 այսպիսով՝ عن عباده وهو الذي يقبل التوبة عن عباده (Նա է, ով կընդունի ապաշխարհանքը իք ծառաներից),

- ب نساխդիրին բնորոշ «-ով» իմաստը, ինչպես 53:3 այսպիսով՝ ما ينطق عن الهوى (Նա չի խոսում կրքով):

5. من نساխդիր.

- في نساխդիրին բնորոշ ներգոյական հոլովի կամ «մեջ» կապի իմաստը, ինչպես 62:9 այսպիսով՝ من يوم الجمعة إذا نودي للصلاة (... երբ աղոթքի կկանչեն հավաքման օրը (բոց.՝ օրվա մեջ) ):

6. على نساխդիր.

- ل نساխդիրին բնորոշ «համար» իմաստը, ինչպես 2:185 այսպիսով՝ على ما هداكم ولتذكروا الله (...և թո՛ղ դուք մեծարեք Աստծուն նրա համար, ինչ նա տվել է ձեզ),

- في نساխդիրին բնորոշ «մեջ» իմաստը, ինչպես 28:15 այսպիսով՝ من أهلها ودخل المدينة على حين غفلة (Նա մտավ քաղաքը այն ժամանակ (բոց.՝ այն ժամանակում), երբ նրա բնակիչներն անհոգ էին):

- من نساխդիրին բնորոշ «-ից» իմաստը, ինչպես 83:2 այսպիսով՝ الذين إذا اکتالوا على الناس يستوفون (Ովքեր մարդկանցից ի օգուտ իրենց են կոշում կհատուցվեն ըստ արժանվույն)

Այսպիսով, Ղուրանի տեքստում վերոնշյալ յոթ նախդիրների հերթագայության բերված օրինակներից դժվար չէ նկատել, որ այդ լեզվական երևույթը լայն տարածում ունի՝ նախդիրների իմաստային շրջանակը շատ դեպքերում ընդլայնվում է, և դրանք հանդես են գալիս իրենց ոչ միայն վիճակագրորեն առավել տարածված՝ հիմնական, այլ երբեմն նույնիսկ հիմնական իմաստից շատ հեռու կամ հակառակ իմաստով:

Նախդիրների փոխարինման բոլոր դեպքերը չէ, որ կարելի է հեշտությամբ բացահայտել և վերականգնել բուն իմաստը: Այդ երևույթը հեշտ է նկատել պարագայական կապակցություններում,

որտեղ ب, ل և من նախադիրները փոխարինում են في նախադիրին՝ արտահայտելով «մեջ» իմաստը: Մնացած դեպքերում նախադիրների փոխարինումը դժվար է հայտնաբերել, որպես օրինակ նշենք ب նախադիրի փոխարինումը ամբողջի մի մասը մատնանշող من նախադիրին:

Նախադիրների փոխարինումը վեր հանելուն ուղղված առավել արդյունավետ մեթոդը Ղուրանի այաթների համատեքստային վերլուծությունն է՝ հատկապես այն բայերի դեպքում, որոնց գործողությունը փոխանցվում է տեղի և ժամանակի պարագային:

## **THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN**

*Khadije Ahmad Mehrabi*

**(Summary)**

Transitive verbs in Arabic convey the action of the subject on the object either directly or through particles that form prepositional combinations with the object. In the latter case, quite often there is an alternation of various prepositions, often opposite to the original meaning. In the article, the problem of such alternations is considered on the example of the use of various prepositions in the text of different verses of the Qur'an.

## **ПРОБЛЕМА ЧЕРЕДОВАНИЯ ЧАСТИЦ В ТЕКСТЕ КОРАНА**

*Хадидже Ахмад Мехраби*

**(Резюме)**

Переходные глаголы в арабском языке передают действие субъекта на объект либо непосредственно, либо посредством частиц, образующих предложные сочетания с объектом. В последнем случае достаточно часто происходит чередование различных предлогов, зачастую противоположных первоначальному значению. В статье проблема подобных чередований рассматривается на примере употреблений различных предлогов в тексте разных сур Корана.